

Պատճենն քղթոյնն ապահովութեան,
քարգնանեալ յարաքացոց քարքառոյ (1)

Յանունն Աստուծոյ ողորմածաց ողորմածին :

Ես Մելէք սպարապետ Աշէշամուր (Ըշըգթիմուր) , այս է ապահովութիւնն առ ի յԱստուծոյ Բարձրելոյ եւ ապահովութիւնն առաքելոյն նորա Մանմեղի, յորոյ վերայ հանգիցէ՝ չնորհ եւ փրկութիւն, եւ ապահովութիւն տեառն մերում հզօր Սուլթանին , սուլթանին Արաքացոց եւ Պարսից , որ է գլուխ հաւատոյ մայրմանաց , դատաւոր համօրէն աշխարհի եւ կորուսիչ անհաւատից եւ թշնամեաց մերոցս օրինաց , Մելէք ամիրայ Լասարար (էլ Աշրաֆ) Շաբան , իշխան աշխարհի եւ հաւատոյ , որդի տեառն մերոյ սուլթանին , Ջամալէզզին Հիւսէյինի որդի տեառն մերոյ սուլթանին եւ երաշխաւորող Մելէք Մասար (Եասըր) , Մանմեղի որդւոյ տեառն մերոյ երաշխաւորողի Մելէք Մանսուր Գալլահոմի (Քեւաուէրի) : Բարձրեալն տացէ նմա զօրութիւնն ի վերայ ժառանգութեան իւրոյ եւ արասցէ զնա տէր ի վերայ ամենայն երկրածնաց : Այս է յետկար ապահովութեան թաղաւորին՝ որ հզօրագոյնն է արարածոց , քաջի Առիւծուն , մկրտելոյն ի ջուրս աւագանին , պահողին պատուիրանաց Աւետարանի , հայագարմ արքային եւ մեծին իրկրպագուս խաչին , զօրագլխին քրիստոնէական բանակի եւ հիման հաւատոց քրիստոնէից , բարեկամին թագաւորաց եւ սուլթանաց , արքային Լեւոնի , որդւոյ Յովհաննու իշխանի , զոր Տէր Աստուած պահեաց ընդ երկայն աւուրս եւ տամք նմա զայս գիր յապահովութեան զի ելեալ յաշտարակէն յանձն արասցէ զայն սուլթանին հզօրի եւ երթիցէ ուր եւ կամեսցի : Եւ սովին յետկարաւ յապահովեալ է անձն նորա եւ թագուհւոյն , անձինք զաւակաց նորա , ինչք նորա եւ ամենայն մարդիկ , եւ լիցի անկասկած եւ մեծարեալ յամենեցունց : Եւ զի գիտացէ , զի հաստատունն է այս յետկար , որ տուաւ վասն նորա , վասն թագուհւոյն , վասն որդւոց եւ ընչից նորա : Գրեցաւ յամենանն Ապրիլի , ի թուին մահմեդականաց 777 : Գոհութիւնն Աստուծոյ , զի Աստուած արար զգթութիւնն իւր ի վերայ Մոհամմեղի եւ ի վերայ աշակերտացն նորա :

(1) Բնագիրը կորսուած է, այլ միայն Դարդելի յառաջ բերած քարգնանութիւնը կայ, որ բնագրի տեղ կրնայ ծառայել եւ անկէ կօզսուինք մենք ալ : (Տե՛ս Դարդելի, եր. 141): Ֆրանսերէն բնագիրը տե՛ս գրքիս վերջը՝ Document IV.